

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Մակիչ Խչեյան

ՀՀ ֆինանսների նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող խորհրդական:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ավստրիայի Հանրապետություն (ք. Վիեննա)՝ 2025 թվականի մարտի 24-ից մինչև մարտի 28-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը.

Հանրային ծախսերի կառավարման գործընկերային ուսուցման ցանց (PEMPAL)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Հանրային ծախսերի կառավարման գործընկերային ուսուցման ցանցի (PEMPAL) կողմից կազմակերպված «Հանրային ֆինանսների կառավարման (ՀՖԿ) ապագան. ռազմավարական զարգացումներ և նորարարական լուծումներ» խորագրով PEMPAL ծրագրի ողջ ցանցի լիազումար նիստին:

5. Քննարկված թեմաները

- **ՀՖԿ-ի ապագայի մարտահրավերներն ու հնարավորությունները:** Քննարկման նպատակն էր ներկայացնել ՀՖԿ-ի հնարավոր զարգացումը և դրա վերաբերյալ տարբեր կառավարությունների անկյունային դերակատարների մոտեցումներն ու տեսլականը, ինչպես նաև այն, թե ինչպես PEMPAL-ը կարող է 2026-2030թթ ընթացքում աջակցել անդամ երկրներին՝ հասնելու համար ազգային զարգացման առաջնահերթությունների սահմանմանը և հստակեցմանը: Այս համատեքստում պանելային քննարկում է տեղի ունեցել մի շարք երկրների ֆինանսների նախարարների (Մոլդովա, Վրաստան, Հյուսիսային Մակեդոնիա), փոխնախարարների (Ղրղզստան, Տաջիկիստան) և այլ պաշտոնյաների մասնակցությամբ: Քննարկմանը մասնակիցները ներկայացրել են իրենց երկրների փորձը, ինչպես նաև նախատեսվող գործողությունները, պատասխանել հարցերին:

- ՀՖԿ-ի ռազմավարության կազմում. ՀՖԿ-ի դերն ազգային զարգացման առաջնահերթություններին աջակցելու գործում:** Քննարկման նպատակն էր ազգային զարգացման առաջնահերթության և ռազմավարական նպատակներին հասնելու համար ՀՖԿ համակարգի արդյունավետ օգտագործման մեխանիզմների վերաբերյալ PEMPAL-ի երկրների ֆինանսների նախարարություններին խորհրդատվություն տրամադրել: Քննարկման ընթացքում Եվրոպական հանձնաժողովի ազգային հարկաբյուջետային շրջանակների և ինստիտուտների տնտեսական և ֆինանսական հարցերի գլխավոր տնօրինության բաժիններից մեկի ղեկավարը ներկայացրեց ռազմավարական պլանավորման և ՀՖԿ-ի փոխկապակցության Եվրոպական միության մեխանիզմները, իսկ Եվրոպական հանձնաժողովի ներքին աուդիտի ծառայության գլխավոր տնօրենը՝ ինչպես կարող է ներքին աուդիտը օգնել իր շահառուներին հասնելու իրենց նպատակներին:
- «Կանաչ» ՀՖԿ. Կլիմայի փոփոխություն և կայունության արձագանք:** Թեմայի շրջանակներում իրականացված քննարկման նպատակն էր բացահայտել «կանաչ» կառավարման քաղաքականությունն արդյունավետ կերպով ՀՖԿ-ում ինտեգրելու ուղիները: Իռլանդիայի կառավարության ներկայացուցիչները հանդես եկան «կանաչ» բյուջետավորման նախաձեռնություններ և կայուն ֆինանսները Իռլանդիայում, իսկ Համաշխարհային բանկի ներկայացուցիչը՝ «կանաչ» քաղաքականության գործիքները և ՀՖԿ-ի ցիկլը թեմայով շնորհանդեսներով: Քննարկմանը նաև միացավ Շվեյցարիայի ներկայացուցիչը՝ կայուն զարգացման վերաբերյալ հաշվետվողականության միջազգային ստանդարտների պարզաբանմամբ: Այնուհետև մասնակիցները պատասխանեցին հարցերին և տեղի ունեցավ քննարկում:
- ՀՖԿ տվյալների հավաքագրում. տվյալների թվայնացում, կառավարում և օգտագործում որոշումների կայացման համար:** Քննարկման նպատակն էր PEMPAL-ի անդամ երկրների ֆինանսների նախարարություններին ծանոթացնել ՀՖԿ-ին առնչվող տվյալների օգտագործման նոր տեխնոլոգիաներին և բացահայտել ՀՖԿ-ի տվյալների հավաքագրման հնարավորություններն ու մարտահրավերները: Այս համատեքստում Համաշխարհային բանկի ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի աշխատանքային խմբի ղեկավարը ներկայացրեց ՀՖԿ-ում առկա տվյալների բացահայտման, վերհանման և օգտագործման

Ժամանակակից մոտեցումներն ու մարտահրավերները: Հարավային Կորեայի ֆիսկալ տեղեկատվության ծառայության օպերացիոն վարչության ղեկավարը ներկայացրեց իրենց երկրի Ինտեգրված հարկաբյուջետային տվյալների համակարգը՝ «dBrain+»-ը: Ավստրիայի ֆինանսների դաշնային նախարարության ներքին աուդիտի ղեկավարն էլ ներկայացրեց ներքին աուդիտի ժամանակ տվյալների օգտագործման իրենց փորձը:

- **PEMPAL-ի հաշվետվություններ և հետագա աշխատանքների պլանավորում:** Քննարկման նպատակն էր արձանագրել PEMPAL-ի հիմնական արդյունքները և ազդեցությունները, ինչպես նաև ուրվագծել պլանները՝ 2026-2030 թվականների համար: Քննարկման արդյունում ելույթներով հանդես եկան բյուջետային, գանձապետական և ներքին աուդիտի աշխատանքային խմբերի ղեկավարները՝ ներկայացնելով նախորդ ժամանակահատվածում խմբերի կողմից կատարված աշխատանքները, ինչպես նաև տեղի ունեցավ քննարկում՝ 2026-2030թթ ընթացքում իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ PEMPAL-ի անդամ երկրների առաջարկությունների և դիտողությունների մասով:
- **Ներքին աուդիտի աշխատանքային խմբի (PEMPAL IACOP) հանդիպում, քննարկելու ներքին աուդիտի ներկայիս դերը, իրավասությունների շրջանակը և գործունեության մեթոդաբանությունը:** Քննարկման առարկաներն էին ներքին աուդիտի իրավասությունների նոր շրջանակը և ներքին աուդիտի ձեռնարկների վերանայման անհրաժեշտության գնահատումը՝ հաշվի առնելով ներքին աուդիտի միջազգային ինստիտուտի կողմից վերջերս հրապարակած ներքին աուդիտի գլոբալ ստանդարտների պահանջները:
- **IACOP PEMPAL-ի և CONACI-ի (Conselho Nacional de Controle Interno՝ Բրազիլիայի ներքին վերահսկողության ազգային խորհուրդ) միջև համագործակցության հուշագրի ստորագրում:**

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացի ընթացքում փորձագետների կողմից ձևավորվել են աշխատանքային խմբեր, որոնք ստանալով պրակտիկ առաջադրանքներ պետական ֆինանսների կառավարման տարբեր ոլորտների վերաբերյալ՝ կատարել են առաջադրանքները և ներկայացրել բանախոսներին:

Ակտիվ մասնակցություն եմ ունեցել ինչպես կլոր-սեղան, այնպես էլ աշխատանքային խմբերի քննարկումներին ներկայացնելով ՀՀ պետական ֆինանսների կառավարման ոլորտում՝ մասնավորապես ներքին աուդիտի համակարգում տեղի ունեցող բարեփոխումները:

Դասընթացի ավարտին տեղի է ունեցել հարց և պատասխան՝ դասընթացից ստացված արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև ներկայացվել է այն բարեփոխումների շրջանակը որոնք կարևորվում են Հայաստանում ներդրման տեսանկյունից:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի շրջանակում հանդիպումներ չեն եղել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկություններ չեն եղել:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Մակիչ Խչեյան

02.04.2025թ.

